ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027ԹԹ ՄԺԾԾ

Ստեփանավան համայնքի 2025-2027 թվականի ՄԺԾԾ-ն կազմվել է՝ հիմք ընդունելով համայնքի 2022-2026 թվականների զարգացման ծրագրի գերակայությունները, ՀՀ կառավարության ծրագրերի առաջնահերթ ուղղությունները, որոնք արտացոլվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված համայնքների առաջիկա տարվա բյուջետային հայտերի կազմման պարտադիր և խորհրդատվական մեթոդական ցուցումներում և ուղեցույցներում, և որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը և հստակությունը:

Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային կանխատեսումներն ու ծրագրումները իրականացվում են յուրաքանչյուր մասերի համար առանձին: Համայնքի ՄԺԾԾ պլանավորումն իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հիմնվել ենք վերջին երեք տարիների ընթացքում փաստացի համայնքային բյուջե մուտքագրված եկամուտների հոսքի և առկա բազաների հիման վրա: Այն պլանավորված է նպաստելու համար համայնքի համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

1.Բյուջեի եկամուտների կանխատեսում

Ստեփանավան համայնքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի կանխատեսված եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 1018527.5 հազար դրամ, գերազանցելով նախորդ տարվա պլանավորված բյուջեն 8.4 %-ով, որը կազմել է 85412.893 հազար դրամ:

2025 թվականի հարկային եկամուտները ծրագրվել են հիմքում ունենալով 2023 թվականի կատարողականը, 2024 թվականին համայնքում հարկերի հավաքագրման համար իրականացվող միջոցառումների հետևողականությունը և արդյունավետությունը: Հարկային եկամուտները ծրագրելիս հաշվի են առնվել առկա ապառքները և 2024 թվականի հաշվարկային ցուցանիշները: Հարկային եկամուտների կանխատեսվող աճը պայմանավորված է գույքային հարկերի բազաների ճշտումների արդյունքով, ինչպես նաև համայնքում նոր գրանցված փոխադրամիջոցների հարկով:
Նախագծով նախատեսված եկամուտների հիմավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում:
Մասնավորապես.

1) Հարկեր և տուրքեր.

2025թ. ծրագրվել են 183366.7 հազար դրամի չափով կամ 2024 թվականի 178420.4 հազար դրամի դիմաց՝ հաստատված ցուցանիշից 49463.0 հազար դրամով և կամ 2.7 %–ով ավել:
2023 թվականին անշարժ գույքից գույքային հարկերի հաշվարկային թիվը կազմել է 43035.6հազ հազ.դրամ՝ հավաքագրվել է 39123.4 հազ. դրամ, իսկ 2024 թվականին հաշվարկային թիվը կազմել է 47851.1 հազ.դրամ: 2025 թվականի բյուջեում անշարժ գույքից գույքային հարկերի գծով նախատեսելվել է 51253.8 հազ.դրամ դրամ՝ 7.8 %–ով ավել:

- Գույքահարկ փոխադրամիջոցներ համար 2023թ. հաշվարկային թիվը կազմել է 107591.9 հազ.դրամ,հավաքագրվել է 101484.0 հազ. դրամ, իսկ 2024 թվականին հաշվարկային թիվը կազմել է 110519.2 հազ.դրամ: 2025 թվականի բյուջեում նպատակահարմար է գույքահարկ փոխադրամիջոցներ գծով նախատեսել 112837.9 հազ.դրամ:

- Տեղական տուրքերը 2025թ.համար ծրագրվել են 10955.0 հազար դրամի չափով, որը 1055.0 հազար դրամով պակաս է 2024 թվականի ծրագրային ցուցանիշից: Այն պայմանավորված է համայնքի վարչական տարածքում տնտեսվարողների քանակի պակասեցմամբ:
- Պետական տուրքերը ծրագրվել են 8400.0 հազար դրամ՝ 2023 թվականի համար հաստատված ցուցանիշը գերազանցելով 400.0 հազ.դրամով , որից՝ քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 3200.0 հազար դրամ, նոտարական գրասենյակի կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 5200.0 հազար դրամ: Հաշվի են առնվել 2023-2024թթ. նոտարական գրասենյակի և քաղաքացիական կացության կողմից մատուցված ծառայությունների քանակը:

2.) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները նախագծով ծրագրվել են 728340.4 հազար դրամ՝ 2024 թվականին նախատեսված գումարի համեմատ ավելանալով 13.7 %-ով կամ 87325.5 հազար դրամով, իսկ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) պլանավորվել են հիմք ընդունելով 2024 թվականին ներկայացված հայտերին համապատասխան:

3) Այլ եկամուտներ.

2023թ. այլ եկամուտների հաշվարկային գումարը կազմել է 125563.0 հազ.դրամ, իսկ փաստացի մուտքերը 106724.9 հազ դրամ՝ կատարելով 85%ով: 2024 թվականի բյուջեով հաշվարկային թիվը կազմել է 110628.9 հազար դրամ, իսկ 2025 թվականի ծրագրով այլ եկամուտները նախատեսվել են 103690.0 հազար դրամ՝ պակաս 6938.9 հազար դրամ: Այստեղ հաշվարկային ճշտումներ են կատարվել բազմաբնակարան շենքերի պահպանման ծախսերի բազայում և համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարների հետ կապված: Այլ եկամուտները իրենց մեջ ներառում են հողի և գույքի վարձակալությունից եկամուտները, վարչական գանձումները (նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպություններում համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարներ), տեղական վճարները (աղբահանություն), տույժերը, տուգանքները, պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները և այլ եկամուտներ:

Հարկաբյուջետային կանխատեսումները հիմնված են մի շարք ենթադրությունների և հիմնական դատողությունների վրա: Ինչպես ցանկացած կանխատեսում, հարկաբյուջետային կանխատեսումները նույնպես պարունակում են ռիսկեր, վարքագծի կանոնների փոփոխություն առ այն, որ փաստացի իրադարձությունները կարող են տարբերվել սպասվածից: Համայնքի ղեկավարի հետևողական, բացատրական և վարչարարական աշխատանքների արդյունքում փորձում ենք հասնել ռիսկերի նվազեցման և չեզոքացման:

Ֆոնդային բյուջեի եկամուտները գոյացել են վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող մասհանումներից, պետական բյուջեից ստացված սուբվենցիաներից և անշարժ գույքի օտարումից մուտքերի հաշվին:

- 2025թ. նախատեսվել է հողի օտարում 120000.0 հազ.դրամ, որն ունի նվազման միտում, և արտացոլվել է 2026թ.և 2027թ.միջնաժամկետ ծախսերի ծրագրում:
- Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող մասհանումը նախատեսվել է 80000.0 հազ.դրամ, որն էլ համապատասխանաբար աճման միտում ունի՝ 2026թ.-100000.0 հազ.դրամ, և 2027թ.-120000.0 հազ.դրամ:

1.1. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի վարչական բյուջեի եկամուտները.

Ð/Ñ	Մուտքի անվանումը	2023թ փաստ	2024թ. Հաստ.	2025 թ. կանխ.	2026թ. կանխ.	2027 թ. կանխ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4+5+6)	**681027.8**	**933114.4**	**1018527.5**	**1093207.4**	**1150182.2**
1	Գույքային հարկեր անշարժ գույքից	39123.4	47851.1	51253.8	54835.5	55900.0
2	Գույքային հարկեր այլ գույքից	101484.0	110519.2	112837.9	115519.2	120519.2
3	Տուրքեր	18847.8	20050.0	19355.0	19815.0	20875.0
4	Պաշտոնական դրամաշնորհներ	**414847.8**	**644065.3**	**731390.8**	**792537.8**	**840138.0**
5	Այլ եկամուտներ	96280.2	90138.9	87390.0	91350.0	92470.0
6	Հողի և գույքի վարձակալություններ	**10444.7**	**20489.9**	**16300.0**	**19150.0**	**20280.0**

այդ թվում՝

		2023թ. փաստ	2024թ. հաստ	2025թ. կանխ.	2026թ. կանխ.	2027թ. կանխ.
	Վարչական բյուջեի սեփական եկամուտներ	264181.0	287050.0	285036.7	298469.7	307844.2
	Եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը %	38.8	30.8	28.0	27.3	26.8

2. Բյուջեի ծախսերի կանխատեսում

Ստեփանավան համայնքի 2025-2027 թվականների ծախսերի պլանավորման հիմքում, դրված են այն հիմնախնդիրները, որոնց լուծման առաջնահերթությունները ամրագրված են համայնքի զարգացման տեսլականում: Ստեփանավան խոշորացված համայնքի 5-ամյա զարգացման ծրագրի տեսլականն է ստեղծել կայուն, համաչափ զարգացող, մրցունակ տնտեսությամբ, զբաղվածության բարձր մակարդակ ունեցող, աղքատությունը հաղթահարած համայնք: Ստեփանավան համայնքի առկա իրավիճակի վերլուծման հիման վրա մշակվել են հետևյալ ռազմավարական նպատակները.

1. Մինչև 2027 թվականը Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքի տնտեսական աճի ապահովում՝ տնտեսության վարման ինտենսիվ մեթոդների կիրառմամբ՝ աշխատատեղերի ստեղծում, աղքատության կրճատում
2.Մինչև 2027 թվականը համայնքի թույլ զարգացած ոլորտների անհամաչափության նվազեցում
3. Համայնքի զարգացման ռազմավարության իրականացման ընթացքում տեղական ինքնակառավարման մարմնի դերակատարության ակտիվության բարձրացում և մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավում:

Սահմանվել են զարգացման առաջնահերթ գերակայություններ.

ա) արդյունաբերության աճ՝ շեշտը դնելով փոքր ու միջին բիզնեսի զարգացման վրա
բ) ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում
գ) տուրիզմի զարգացում՝ շեշտը դնելով հոգևոր, մշակութային, տուրիզմի և ագրոտուրիզմի վրա
դ) մրցունակ, հագեցած, ժամանակի մարտահրավերներին ընդառաջ գնացող տեղական ինքակառավարում ունեցող համայնք
ե) դիմակայուն, ինքնատիպ, կանաչ համայնք
զ) առողջ և սպորտային համայնք

Ստեփանավան համայնքի 2025 թվականի միջնաժամկետ ծախսերի ծրագրով ծախսերը նախատեսվել են է 2 207 556.7 հազար դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 46.1 %-ը կամ 1 018 527.5 հազար դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 1 269 029.2 հազար դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին (ֆոնդային բյուջե), իսկ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի գումարը կազմում է 120000.0 հազար դրամ:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերում 33.8 %-ը բաժին է ընկել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ոլորտին, 3.4 %-ը՝ «Տնտեսական հարաբերություններ» ոլորտին, 10.7 %-ը՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն» ոլորտին, 3.3 %-ը՝ «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» ոլորտին, 5.8 %-ը՝ «Հանգիստ, մշակույթ և կրոն» ոլորտին, 29.7 %-ը՝ «Կրթություն» ոլորտին, 0.5 %-ը՝ «Սոցիալական պաշտպանություն» ոլորտին, 12.4 %-ը՝ «Հիմնական բաժիներին չդասվող պահուստային ֆոնդեր» ոլորտին: Պահուստային ֆոնդը նախատեսվել է վարչական բյուջեի եկամուտների 12.4 %-ի չափով՝ ապահովելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի պահանջները:

Ստորև ներկայացվում են համայնքի 2025 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրի:

1) «Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում» ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրական պահանջները և խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները: Նախորդ տարվա համեմատ պահպանման ծախսերը ավել են պլանավորվել 8.6 %-ով՝ հիմք ընդունելով խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև նախատեսվել է աշխատավարձի բարձրացում 10%-ով: Ծախսերը պլանավորվել են՝ հաշվի առնելով վերջին երեք տարիների փաստացի ցուցանիշները:

Համայնքային ոչ առևտրային 10 կազմակերպությունների պահպանման համար նախատեսվել է 596043.9 հազ.դրամ՝ նախորդ 546705.31 հազ.դրամի դիմաց: Այստեղ նույնպե նախատեվել է աշատավարձի բարձրացում 10%-ով:

Համայնքի վարչական բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման

Հ/հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2023թ. փաստ	2024թ. .. **հաստ**	2025թ. **կանխ.**	2026թ. կանխ.	2027թ. կանխ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**371187.0**	**933114.6**	**1018527.5**	**1093207.5**	**1150182.3**
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	229271.9	313877.3	344801.9	359424.0	375201.8
	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	30132.6	31777.0	34861.1	38537.6	42599.4
2	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	69186.5	100899.5	109563.3	115356.2	126848.5

3	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	26619.1	31354.9	33882.0	38707.8	43418.6
4	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	41596.6	54454.0	60193.4	70026.5	74047.4
5	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	198680.3	278796.3	303070.1	318223.1	334134.3
6	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	3200.0	5300.0	5500.0	6300.0	7300.0
7	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	72500.0	116655.7	126655.7	146632.3	146632.3

Համայնքի վարչական բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման

Հ/հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2023թ.. փաստացի	2024թ. հաստատված	2025թ. կանխ.	2026թ. կանխ.	2027թ. կանխ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	715219.0	933114.6	1018527.5	1093207.5	1150182.3
1	Աշխատանքի վարձատրություն	141924.8	184840.0	203804.0	213037.7	222859.6
2	Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	44005.8	76013.6	81623.9	77113.4	88703.8
3	Դրամաշնորհներ	398278.8	546705.3	596043.9	644874.1	679286.6
4	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	11925.2	5000.0	5000.0	6000.0	7000.0
5	Այլ ծախսեր	75052.5	120555.7	132055.7	152182.3	152332.3

2) Բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման համար համայնքում ծրագրվել են կատարելու հետևյալ կապիտալ աշխատանքները, սուբվենցիոն ծրագրերով՝

2024թ. սուբվենցիոն ծրագրերի միջոցով նախատեսվել են

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի բազմաբնակարան շենքերի բակերի, թիվ 1, 3, 4 մանկապարտեզների բակերի, քաղաքի և վարչական տարածքների պուրակների բարեկարգում և

հիմնանորոգում : Ծրագրի ընդհանուր բյուջեն 901358.086 դրամ է, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 315475.330 դրամ,

2.) Կապիտալ ծախսերից 477450.0 հազ.դրամ ուղղվելու է Արմանիս, Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերի ջրատարների կառուցմա ն համար: Ծրագրի ընդհանուր բյուջեն 369318.986 հազ. դրամ է, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 110795.696 հազ.դրամ

3) Համայնքը շարունակելով հարմարավետ, մաքուր և մատչելի միջավայրի ձևավորման քաղաքականությունը՝ 2024 թվականին նախատեսել է 171600.0 հազար դրամ տեխնիկայի ձեռք բերում, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 94380.0 հազար դրամ

4) Շարունակվում է Ռումինական բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության արդիականացման ռիսկերի նվազեցման նպատակով կատարվող աշխատանքները : 2024թ. նախատեսվում է վերանորոգել 5 շենք՝ ընդհանուր 278711.103 հազ.դրամով, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 72241.918 հազ.դրամ ,այդ թվում բնակիչների կողմից ներդրում 13935.556 հազ.դրամ:

- Կապիտալ ծախսերի թերակատարում: 2024թ. բյուջեի հիմքում դրված սցենարում նախատեսվել է կապիտալ ծախսերի զգալի բարձր մակարդակ: Սակայն հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի կատարողականները (չնայած այն հանգամանքին, որ առկա է եղել կատարողականների բարելավման միտում), առկա է ծրագրված ցուցանիշների թերակատարման ռիսկ: Տնտեսության ներքին մարտահրավերներների հաղթահարման, այդ ռիսկերի կառավարման համար ընթացիկ ծախսերի կազմում կատարվել է պահուստային ֆոնդի նախատեսում: Ինչպես նաև նախատեսվել է աշխատանքները ավարտին հասցնել 2025թ. առաջին եռամսյակում՝ որն էլ արտահայտված է 2025թ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում:

2025թ. սուբվենցիոն ծրագրերի միջոցով նախատեսվել են

1. **Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ**

<< Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Հ. Մեղապարտ, Ռուսթավելի և Սուրբ Նշան փողոցների հիմնանորոգում: Ծրագրի ընդհանուր բյուջեն 350532.0 հազ. դրամ է, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 192792.6 հազ. դրամ

- Հ. Մեղապարտի, Ռուսթավելի և Սուրբ Նշան փողոցները գլխավոր են, ներհամայնքային, ծրագրի շահառուները համայնքի բնակիչներն են, ինչպես նաև զբոսաշրջիկներ և հյուրերն են ովքեր երթևեկում են այս փողոցով:

Ծրագրի իրականացումն ունի քաղաքաշինական, քաղաքային տնտեսության ենթակառուցվածքների բարելավման և բարեկարգման անհրաժեշտություն, որը կնպաստի համայնքի բնակիչների և զբոսաշրջիկների անվտանգ տեղաշարժին:

2026թ. սուբվենցիոն ծրագրերի միջոցով նախատեսվել են

1.Ստեփանավան համայնքի Արթուր Ղարիբյանի անվան Արվեստի դպրոցի կառուցում

Ծրագրի ընդհանուր բյուջեն 553352.0 հազ. դրամ է, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 304343.6 հազ. դրամ

Արթուր Ղարիբյանի անվան արվեստի դպրոցի կառուցումը և պահպանումը համարվում է համայնքապետարանի ռազմավարական զարգացման հիմնական խնդիրներից մեկը: Արթուր Ղարիբյանի անվան արվեստի դպրոցը կնպաստի համայնքի բնակչության մշակութային

մակարդակի դրական փոփոխությանը, կնպաստի արվեստի բնագավառում նոր նվաճումների ձեռքբերմանը:

2. **ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Իսահակյան,Դեսինի փողոցների հիմնանորոգում:**

Ծրագրի ընդհանուր բյուջեն 830028.0 հազ. դրամ է, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 456515.0 հազ. դրամ

Ծրագրի իրականացումն ունի քաղաքաշինական, քաղաքային տնտեսության ենթակառուցվածքների բարելավման և բարեկարգման անհրաժեշտություն, որը կնպաստի համայնքի բնակիչների և զբոսաշրջիկների անվտանգ տեղաշարժին

2027թ. սուբվենցիոն ծրագրերի միջոցով նախատեսվել են

1. **ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Ռաֆֆի, Արևելյան փողոցների հիմնանորոգում:**

Ծրագրի ընդհանուր բյուջեն 799520.0 հազ. դրամ է, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 439736.0 հազ. դրամ:

Ստեփանավան համայնքում սուբվենցիոն ծրագրերով 2022թ.-2023թ. իրականացվել են լայնածավալ աշխատանքներ՝ փողոցների հիմնանորոգում տուֆե սալարկումով և ասֆալտապատմամբ, Քաղաքային գրադարանի հիմնանորոգում, մշակույթի պալատի վերանորոգում, Ռումինական թաղամասի բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետ արդիականացման ռիսկերի նվազեցում և այլն: Ավարտվել է ՈՒրասար վարչական շրջանի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները և մանկապարտեզը սկսել է իր գործունեությունը: Մանկապարտեզի գույքի մի մասը ձեռք է բերվել պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարներով: Հարկ է նշել,որ Ստեփանավան համայնքի քաղաքային այգում տեղադրվել են տարածաշրջանում իրենց առումով եզակի և միակ ատրակցիոնները՝ համայնապատկերի օղակ, շղթայով կառուսել, ինքնակառավարվող ինքնաթիռ, ավտոարշավարան, հարսանեկան, ամերիկյան թեքուղի, որոնք խթան կհանդիսանան տարածաշրջանի երեխաների ժամանցի հետաքրքիր և հագեցած առօրյան կազմակերպելու և անցկացնելու, ինչպես նաև կնպաստի տուրիզմի զարգացմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ